ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 91

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10-ը հուլիսի 2026թ.

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 24-ը (քվորումն ապահովված էր)։

Նիստը վարում էր ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը։

ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը։

ՕՐԱԿԱՐԳ

1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյան)

2. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2026թ. հարցման արդյունքների մասին։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյան)

3. ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյան)

4. Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի 2025-2026 ուստարվա գործունեության մասին։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյան)

5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին։ *(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի վարիչ Լ. Գ. Բեգինյան)*

6. 2026-2027 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը հաստատելու մասին։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյան)

7. ԵՊՀ ԻՄ ֆինանսական գործունեության մշտադիտարկման արդյունքների ներկայացում և գնահատում։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մ. Մխիթարյան)

8. Ընթացիկ հարցեր

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին *ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա.Հ. Մակարյանի* հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց որոշակի անհամապատասխանություն կատարված փոփոխությունների և ուսանողների/շրջանավարտների կարծիքների միջև: Մինչ շրջանավարտները շեշտադրում են գործնական դասաժամերի և մեթոդների ավելացման անհրաժեշտությունը, որոշ ֆակուլտետներ առաջարկել էին ավելացնել տեսական դասախոսությունների ժամերը: Նա առաջարկեց հաջորդ տարվանից փոփոխություններն անելիս անպայման հաշվի առնել դասընթացների ուսանողական գնահատման արդյունքները և ներկայացնել հստակ հիմնավորումներ որակի ապահովման բաժին:

Այնուհետև Ա. Մակարյանը նշեց կոնկրետ կրթական ծրագրերում կատարված փոփոխությունները:

- Օտար լեզուներ (անգլերեն, ֆրանսերեն): 8-րդ կիսամյակում ավելացվել են լեզվական հմտությունների զարգացմանը ուղղված կամընտրական դասընթացներ:
- Ռուսաց լեզու և գրականություն: «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացում ավելացվել է հետազոտական բաղադրիչ: Սակայն, զեկուցողը բացասական համարեց այն, որ որոշ դասընթացներում (օր.՝ գրականագիտության հիմունքներ) դասախոսություն/սեմինար 30/30 ժամաքանակը դարձել է 45/15՝ զարկ տալով տեսական մասին:
- Հայոց լեզու և գրականություն: Կատարվել են ամենամեծաքանակ՝ 15 փոփոխությունները: Դրանց մեծ մասը (օր.՝ բարբառագիտություն, նորաբանություններ, դարձվածաբանություն) միտված են գործնական ժամերի շատացմանը (30/30-ից դարձել է 15/45), ինչը դրական գնահատվեց:
- Տարրական մանկավարժություն և մեթոդիկա: «Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացներում տեսական նյութի ծավալուն լինելու պատճառով դասախոսության ժամերն ավելացվել են:
- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա: DIGITECH նախագծի շրջանակներում վերանայվել են կրթական վերջնարդյունքները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի արդի պահանջներին:
- Գործարար վարչարարություն (մագիստրոս): Փոփոխությունները կատարվել են՝ հետևելով միջազգային տրենդներին և գերմանական կազմակերպության հավատարմագրման պահանջներին: Ներդրվել են «Ռազմավարական կառավարում» և «Որակի կառավարման համակարգ - ISO 9001» դասընթացները:

Նշվեց նաև, որ մի շարք ծրագրերում (հոգեբանություն, պատմություն, դիզայն, կիրառական արվեստ, ֆինանսներ, զբոսաշրջություն) փոփոխություններ չեն առաջարկվել:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք. Հարությունյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Վ. Աղաբաբյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Ն. Գրիգորյանը և այլք։

Արտահայտվողների հիմնական դիտարկումները հետևյալն էին.

- Տեսական ժամերի պակասի խնդիրը. Խորհրդի անդամներից մեկը հարց բարձրացրեց այն մասին, որ ԵՊՀ-ում դոցենտի պաշտոնի համար պահանջվում է որոշակի քանակի տեսական դասընթացների վարում։ Նշվեց մտահոգություն, որ ամբիոններում տեսական ժամերը շատ քիչ են, քանի որ դրանք հիմնականում վերցնում են պրոֆեսորները, ինչը խնդիրներ է ստեղծում այլ դասախոսների համար։

- Ուսանողական գնահատականների հասանելիությունը. Դասախոսական կազմից հնչեց առաջարկ՝ տրամադրել ամբիոններին ուսանողների կողմից դասընթացների գնահատման արդյունքները։ Նրանք փաստեցին, որ այժմ այդ տվյալները տեսնում է միայն տվյալ դասախոսը, սակայն ամբիոններին դրանք անհրաժեշտ են կրթական ծրագրերում փոփոխություններն առավել հիմնավորված անելու համար։

- Ուսանողների հետ քննարկումների արդյունքները. Խորհրդի անդամները նշեցին, որ ֆակուլտետային նիստերում ուսանողների հետ քննարկումների ժամանակ երբեմն ստացվում են հակասական կարծիքներ։ Օրինակ՝ երբեմն պարզվում է, որ որոշակի դժգոհություն գրել է ընդամենը մեկ հոգի, իսկ մնացած ուսանողները համաձայն չեն այդ կարծիքի հետ, ինչը դժվարացնում է օբյեկտիվ պատկեր ստանալը։

- Մասնագիտական շեշտադրումներ. Հայոց լեզվի և գրականության ծրագրում կատարված մեծաքանակ (15) փոփոխությունների վերաբերյալ Ա. Մակարյանը դիմեց պարոն Ավագյանին՝ նշելով, որ թեև դրանք դրական են (գործնական ժամերի շատացում), սակայն միանգամից այդքան շատ փոփոխություններն աննախադեպ են։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ 91/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերը համաձայն հավելված 1-ի։
2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Օրակարգի երկրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2026թ. հարցման արդյունքների մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի հաղորդումը։

Նա նշեց, որ հարցմանն առկա ուսուցման 12 կրթական ծրագրերի 165 շրջանավարտներից մասնակցել է 164-ը, ինչը ապահովել է գրեթե 100% մասնակցություն և

արդյունքների բարձր արժանահավատություն։ Ըստ ներկայացված տվյալների՝ շրջանավարտների 88.5%-ը սովորել է լավ և բարձր առաջադիմությամբ (13-20 ՄՈԳ)։

Զեկույցում անդրադարձ կատարվեց շրջանավարտների ապագա պլաններին և զբաղվածությանը.

- Հարցվածների 53.7%-ը պատրաստվում է շարունակել կրթությունը, ընդ որում՝ «Հոգեբանություն» կրթական ծրագրի շրջանավարտների դեպքում այդ ցուցանիշը կազմում է 100%։
- Զբաղվածության հարցում պատկերը համարվեց մտահոգիչ, քանի որ շրջանավարտների 53%-ը դեռևս չգիտի, թե որտեղ է աշխատելու։
- Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց շրջանավարտների բավարարվածությունը ուսումնառության արդյունքներից.
- Տեսական գիտելիքներ. շրջանավարտների 75%-ը լիովին բավարարված է ստացած գիտելիքներից։
- Գործնական հմտություններ. լիովին բավարարված է միայն 55.5%-ը, ինչը զեկուցողի կողմից որակվեց որպես լուրջ խնդիր, որը պահանջում է դասավանդման մեթոդների վերանայում։
- Օտար լեզուների իմացություն. արձանագրվեց ամենացածր ցուցանիշը՝ 41.5%, ինչը փաստում է, որ ուսանողները դժվարանում են աշխատել օտարալեզու գրականության հետ։

Գնահատման համակարգի վերաբերյալ նշվեց, որ թեև թափանցիկությունից գոհ է շրջանավարտների 72.6%-ը, սակայն օբյեկտիվության ցուցանիշն ավելի ցածր է՝ 65.2%։ Միևնույն ժամանակ, ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) օբյեկտիվությունը շրջանավարտները շատ բարձր են գնահատել՝ միջինը 4.6 միավոր, իսկ գիտական ղեկավարների աշխատանքը՝ 4.7 միավոր։

Ռեսուրսների գնահատման մասում զեկուցողը փաստեց, որ շրջանավարտները հիմնականում բավարարված են լսարանների վիճակից (65.2%) և համակարգչային սրահներից (68.3%), սակայն որոշ կրթական ծրագրերում դժգոհություն կա համացանցի մատչելիությունից և որակից։

Մասնաճյուղի և ֆակուլտետների ղեկավարման վերաբերյալ կարծիքները դրական էին. մասնաճյուղի ղեկավարությունից գոհ է 91.4%-ը, ֆակուլտետների ղեկավարությունից՝ 87%-ը, իսկ դասախոսական կազմից՝ 87.1%-ը։

Որպես մասնաճյուղի ուժեղ կողմեր շրջանավարտները նշել են որակյալ կրթությունը, փորձառու դասախոսական կազմը և կարգապահությունը։ Թույլ կողմերի շարքում մատնանշվել են մասնագիտական գրականության պակասը, պրակտիկայի սահմանափակ հնարավորությունները, ինտերնետի թույլ կապը և գործնական պատրաստվածության պակասը։

Ամփոփելով՝ Ա. Մակարյանը հայտնեց, որ շրջանավարտների 92%-ը դրական է գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունը (միջինը՝ 4.47 միավոր), և 95%-ը խորհուրդ կտա մերձավորներին ընդունվել այս բուհ։

Ա. Մակարյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 2-ում։

Արտահայտվեցին՝ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Գ. Սիրոյանը, ԵՊՀ ԻՄ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ Գ. Սիմոյանը, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի

դոցենտ Ա. Ազատյանը, գրադարանի վարիչ Վ. Պողոսյանը, ուսանող Շ. Շահնազարյանը և այլք:

Ելույթ ունեցողները և նրանց բարձրացրած հիմնական հարցերը հետևյալն էին.

- Ա. Ազատյանը անդրադարձել է «Պատմություն» մասնագիտության շրջանավարտների դժգոհությանը՝ կապված լրացուցիչ գրականության տրամադրման հետ: Նա տարակուսանք է հայտնել, որ չնայած ինքը ուսանողներին մշտապես ապահովում է անհրաժեշտ նյութերով և հետազոտական գրականությամբ, հարցումների մեջ այդ կետը ստացել է ամենացածր գնահատականը:
- Գ.Սիմոնյանը բարձրացրել է երիտասարդ դասախոսների պակասի հարցը՝ նշելով, որ շրջանավարտներն իրենց պատասխաններում շեշտել են երիտասարդ կադրերին տեսնելու ցանկությունը:
- Գ. Սիրոյանը արձագանքելով երիտասարդ կադրերի խնդրին՝ փաստել է, որ արդեն քանի տարի է՝ ասպիրանտուրայի անվճար տեղերի համար դիմողներ չկան, ինչը դժվարացնում է դասախոսական կազմի համալրումը:
- Ա. Դավթյանը առաջարկել է ավարտական աշխատանքների թեմաները հաստատել ամբիոններում և դնել ընդհանուր ցանկով, որպեսզի ուսանողները թեմաներն ընտրեն ըստ հաստատված ցուցակի, այլ ոչ թե դասախոսների հետ «գաղտնի պայմանավորվածություններով»:
- Ք. Հարությունյանը անդրադարձ է կատարվել նրան օտար լեզուների դասաժամերի քանակի և ուսանողների կողմից այդ առարկայի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի համատեքստում:
- Շուշանիկ Շահնազարյանը (շրջանավարտ) քննարկմանը ներգրավվել է որպես շրջանավարտների ներկայացուցիչ՝ պարզաբանելու օտար լեզուների ուսուցման հետ կապված դժգոհությունները:

Առաջարկվել է նաև ուժեղացնել վերահսկողությունը քննությունների ժամանակ, որպեսզի բացառվի արտագրությունը, և գնահատականն ավելի օբյեկտիվ լինի, տրամադրել լսարաններում տեղադրված տեսախցիկների նկարահանած նյութերը՝ դասախոսների աշխատանքը և ուսանողների վարքագիծը հետագայում ուսումնասիրելու համար:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ

- «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2026թ. հարցման արդյունքների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ **՝** «ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի մասին լսեցին *ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյանի* հաղորդումը:

Նա տեղեկացրեց, որ փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկով, որն ուժի մեջ է մտնելու 2027 թվականից: Նա պարզաբանեց, որ թեև նախարարությունը դեռևս չի հաստատել կոնկրետ կրթական ծրագրերը, սակայն մասնաճյուղն այս փուլում պետք է վերանայի իր մասնագիտությունների ցանկը՝ դրանք նոր դասիչներին ու անվանումներին համապատասխանեցնելու համար:

Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց մասնագիտությունների կառուցվածքային և անվանական փոփոխությունները.

- Նոր համակարգում մասնագիտությունները խմբավորված են ըստ ոլորտների և բնագավառների, ինչը երբեմն հանգեցնում է մի քանի ուղղությունների միավորման։
- «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունը էական փոփոխության է ենթարկվել և նոր ցանկում ներկայացված է որպես «Ծրագրային ապահովման և հաղորդումների մշակում» (դասիչ՝ 0613)։
- «Ֆինանսներ» մասնագիտությունը վերանվանվել է «Ֆինանսներ, բանկային գործ և ապահովագրություն»։
- «Պատմություն» մասնագիտությունը ներառվել է «Պատմություն և հնագիտություն» խմբում։
- «Զբոսաշրջություն» մասնագիտությունը նոր ցանկում ձևակերպված է որպես «Ճանապարհորդություն, զբոսաշրջություն և հանգիստ»։

Հաղորդման ընթացքում զեկուցողն անդրադարձավ նաև լեզվաբանական մասնագիտությունների անվանումներին։ Նշվեց, որ հետևելով ընդհանուր միտմանը և նախարարության մոտեցումներին՝ նպատակահարմար է համարվել անվանումներից հանել «լեզու» բառը (օրինակ՝ «Անգլերեն և գրականություն»)։

Ա. Մակարյանը հատուկ շեշտեց, որ այս բոլոր փոփոխությունները վերաբերում են բացառապես 2027 թվականից ընդունվող առաջին կուրսեցիներին, իսկ արդեն սովորող ուսանողների համար որևէ փոփոխություն չի նախատեսվում։

Ելույթի ավարտին զեկուցողն առաջարկեց հաստատել 2027թ. ընդունելության նախնական ցանկը, որպեսզի հնարավոր լինի հետագայում իրականացնել ցուցիչների և այլ մանրամասն տվյալների քննարկումը։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, դոցենտներ Գ. Սիմոնյանը, Գ. Սիրոյանը, Ք. Հարությունյանը և այլք։

Խորհրդի անդամների կողմից հնչած հիմնական դիտարկումներն ու հարցադրումները հետևյալն էին.

- Մասնագիտությունների դասակարգում. Խորհրդի անդամներից մեկը հետաքրքրվեց նոր դասիչների (շիֆրերի) նշանակությամբ, մասնավորապես՝ թե ինչ են նշանակում «ոլորտ», «բնագավառ» և «մասնագիտություն» հասկացությունները նոր ցանկում։ Հարց բարձրացվեց նաև այն մասին, թե արդյոք ներկայիս գործող կրթական ծրագրերի դասիչները կպահպանվեն, թե՞ կենթարկվեն փոփոխության։
- Մասնագիտությունների անվանափոխություններ. Քննարկման մասնակիցներն արձագանքեցին մի շարք մասնագիտությունների անվանումների էական փոփոխություններին։ Մտքերի փոխանակություն տեղի ունեցավ «Ինֆորմատիկա» և

«Զբոսաշրջություն» մասնագիտությունների նոր՝ ավելի ընդգրկուն անվանումների վերաբերյալ։

- Լեզվաբանական մասնագիտությունների անվանումներ. Առավել աշխույժ քննարկում ծավալվեց մասնագիտությունների անվանումներից «լեզու» բառը հանելու վերաբերյալ։ Խորհրդի անդամները նշեցին, որ թեև նախկինում պահանջվում էր գրել, օրինակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն», այժմ նախարարության մոտեցումն այն է, որ «լեզու» բառն ավելորդ է, քանի որ հենց անգլերենը կամ ռուսերենը արդեն իսկ լեզու են։
- Փոփոխությունների կիրառման ժամկետներ. Հարց հնչեց նաև այն մասին, թե արդյոք այս անվանական փոփոխությունները կտարածվեն նաև բարձր կուրսերում սովորողների վրա։ Պարզաբանվեց, որ փոփոխությունները կիրառվելու են միայն 2027 թվականից ընդունվող առաջին կուրսեցիների համար։

Խորհրդի անդամները (այդ թվում՝ նիստը նախագահողը) համաձայնության եկան այս փուլում հաստատել մասնագիտությունների **նախնական ցանկը**, իսկ դիմորդների թվի և այլ ցուցանիշների քննարկումը թողնել հաջորդ նիստերին

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ 91/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 3-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2027/2028 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների նախնական ցանկը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Օրակարգի չորրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2025-2026 ուստարվա գործունեության մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ ներկայացուցիչ Լիանուշ Բլբուլյանի հաղորդումը։

Լիանուշ Բլբուլյանի զեկույցում մանրամասն ներկայացվեցին հաշվետու տարում իրականացված կրթական, գիտական և մշակութային միջոցառումները, որոնք միտված էին ուսանողների գիտահետազոտական ակտիվության բարձրացմանը:

Զեկուցողը նշեց հետևյալ հիմնական ուղղությունները և միջոցառումները.

- Իրազեկում և ներգրավում. Ուսումնական տարվա սկզբում իրականացվել են իրազեկման հանդիպումներ առաջին կուրսեցիների հետ՝ նրանց ծանոթացնելու ՈՒԳԸ կառուցվածքին, լիազորություններին և ընձեռվող հնարավորություններին:
- Գիտական սեմինարներ. Բնագիտական գիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվել է սեմինար «Բլոկչեյնի կիրառությունները և հեռանկարները» թեմայով (16 մասնակից)։ Մեկ այլ սեմինար նվիրված էր հետազոտական աշխատանքի մեթոդներին և տրամաբանությանը, որտեղ

անդրադարձ է կատարվել նաև արհեստական բանականության և գիտության առնչություններին (21 մասնակից բոլոր ֆակուլտետներից):

- Ստեղծագործական միջոցառումներ. Կազմակերպվել է «Ստեղծագործ մտքի ձայնը» խորագրով միջոցառումը, որի ընթացքում 7 ուսանողներ ներկայացրել են իրենց հեղինակած արձակ և չափածո ստեղծագործությունները, որոնց զգալի մասը վերաբերում էր 44-օրյա պատերազմին:
- Համագործակցություն գրադարանների հետ. Մարզային գրադարանի հետ համատեղ իրականացվել են մայիսյան հերոսամարտերին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև «Բացահայտենք մեր գրադարանը» ճանաչողական արշավը նորեկ ուսանողների համար:
- Ակադեմիական աջակցություն. Կրթական բարեփոխումների բաժնի հետ համատեղ կազմակերպվել է դասընթաց ավարտական աշխատանքների գրելու մեթոդաբանության և կանոնների վերաբերյալ:
- Ազգագրական և բանահավաքչական աշխատանք. Ուսանողների կողմից հավաքագրվել են տարածաշրջանային զրույցներ, ավանդազրույցներ և ծիսական արարողակարգեր, որոնք նախատեսվում է ամփոփել և հրատարակել առանձին գրքույկով:
- Ինտելեկտուալ խաղեր և կապ դպրոցների հետ. Իրականացվել է «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը տարածաշրջանի մի շարք միջնակարգ դպրոցների (Այգեհովիտ, Ազատամուտ, Սևքար, Հաղարծին) աշակերտների մասնակցությամբ, որի եզրափակիչ փուլը տեղի է ունեցել մասնաճյուղում:
- Գիտափիլիսոփայական քննարկումներ. Մեկնարկել է «Գիտությունը և կրոնը» միջոցառումների շարքը, որի նպատակն է քննարկել գիտական հայտնագործությունների և կրոնական ընկալումների փոխառնչակցությունները:

Լիանուշ Բլբուլյանը նաև հավելեց, որ ՈՒԳԸ սոցիալական հարթակներով պարբերաբար իրազեկում է ուսանողներին կրթաթոշակների, դրամաշնորհների և կամավորական աշխատանքների հնարավորությունների մասին:

Զեկույցից հետո խորհրդի անդամների կողմից արվեցին դիտողություններ ուսանողների գիտական հոդվածների սակավության և կոնֆերանսներին թույլ մասնակցության վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ 91/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության 2025-2026 ուստարվա գործունեության մասին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ ներկայացուցիչ Լիանուշ Բլբուլյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության 2025-2026 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Օրակարգի հինգերորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի մասին լսեցին *ԵՊՀ ԻՄ պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի վարիչ Լ. Գ. Բեգինյանի* հաղորդումը:

Լ. Բեգինյանը ներկայացրեց է 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների համապարփակ պատկերը:

Նշվեց, որ հաշվետու տարում կազմակերպվել և համակարգվել է ընդհանուր 38 պրակտիկա, որոնցից 7-ը՝ ուսումնական, 11-ը՝ մանկավարժական և 20-ը՝ մասնագիտական: Գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով մասնաճյուղը համագործակցել է բազմաթիվ պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ կիրառելով 17 հուշագիր, 1 համաձայնագիր և 29 պայմանագիր: Պրակտիկաներն անցկացվել են ինչպես Իջևանում, այնպես էլ Երևանում և ՀՀ մի շարք մարզերում: Նշվեց, որ ուսումնական պրակտիկային մասնակցել է 104 ուսանող 6 կրթական ծրագրերից: Բոլոր մասնակիցները ստացել են «ստուգված» գնահատական: Մանկավարժական պրակտիկան ընդգրկվել է 74 ուսանող «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ու «Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրերից: Աշխատանքները կազմակերպվել են հիմնականում Իջևանի թիվ 1 և թիվ 5 հիմնական դպրոցներում: Մասնագիտական պրակտիկան ամենամասշտաբայինն էր, որին մասնակցել է 299 ուսանող բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր կրթական ծրագրերից:

Լ. Բեգինյանը փաստել է, որ գործատուների շրջանում անցկացված հարցումները վկայում են բարձր գոհունակության մասին. պրակտիկայի կազմակերպման միջին միավորը կազմել է 4.8 (5-բալային համակարգով):

Լ. Բեգինյանը նշեց, որ գործատուները բարձր են գնահատել ուսանողների տեսական գիտելիքները, ժամանակակից մեթոդների տիրապետումը և ՏՀՏ հմտությունները, առաջարկվել է ավելի շատ ուշադրություն դարձնել գործնական կարողություններին, հաճախակի դարձնել հանդիպումները փորձառու մասնագետների հետ և ուսանողներին ներգրավել իրական աշխատանքային խնդիրների լուծման մեջ:

Նա ներկայացրեց նաև ուսանողների բավարարվածությունը: Ըստ ներկայացված տվյալների՝ շրջանավարտների 71.3%-ը պրակտիկաների օգտակարությունը գնահատել է «լավ»: Ուսանողների մեծամասնությունը գտել է, որ պրակտիկայի վայրը լիովին համապատասխանում է իրենց մասնագիտությանը և ձեռք բերված հմտությունները օգտակար կլինեն ապագա աշխատանքում: Որպես դրական կողմեր ամենահաճախը նշվել են պրակտիկայի ուսուցողական, արդյունավետ և գործնական բնույթը:

Զեկույցում անդրադարձ է կատարվել նաև թույլ կողմերին: Ուսանողների մի մասը (շուրջ 50%-ը) նշել է, որ պրակտիկան ժամանակատար է: Նկատվել է նաև, որ որոշ դեպքերում ուսանողները դժվարանում են տեսական գիտելիքները վերածել գործնական հմտությունների, ինչը պահանջում է դասավանդման մեթոդների հետագա բարելավում:

Ամփոփելով՝ Լ. Բեգինյանը նշել է, որ պրակտիկայի արդյունքների վերլուծությունը կփոխանցվի ամբիոններին՝ կրթական գործընթացը կատարելագործելու նպատակով: Լ. Բեգինյանի հաղորդումն ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 4-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Գ. Սիրոյանը, Վ. Ավագյանը, Ք. Հարությունյանը, Ա. Ազատյանը և այլք։

Քննարկման ընթացքում հնչած հիմնական դիտարկումներն ու առաջարկները հետևյալն էին.

- **Ա. Հ. Մակարյան.** Նա հանդես է եկել բազմաթիվ դիտարկումներով և համակարգային առաջարկներով.
    - Հաշվետվողականության բարելավում. Առաջարկել է հաջորդ տարվա հաշվետվություններում հստակ նշել պրակտիկայի կոնկրետ վայրերը (օրինակ՝ որտեղ են անցել ինֆորմատիկայի ուսանողները), որպեսզի պատկերն ավելի պարզ լինի։
    - Գնահատման օբյեկտիվություն. Մտահոգություն է հայտնել այն դեպքերի վերաբերյալ, երբ մասնաճյուղի դասախոսը միաժամանակ հանդիսանում է նաև տվյալ ՏՏ ընկերության աշխատակիցը և գնահատում է իր իսկ ուսանողին։ Ըստ նրա՝ սա կարող է հարցեր առաջացնել գնահատման անկողմնակալության վերաբերյալ։
    - Մանկավարժական պրակտիկայի արդիականացում. Շեշտել է, որ մանկավարժ-ուսանողներին պետք է սովորեցնել լուծել իրավիճակային խնդիրներ (քեյսեր), քանի որ ուսուցիչների ներկայիս ատեստավորման քննությունները հիմնված են հենց նմանատիպ իրական իրավիճակների լուծման վրա։
    - Օտար լեզուների խնդիրը. Տարակուսանք է հայտնել, որ օտար լեզվի բաժնի ուսանողները երբեմն խուսափում են թարգմանչական աշխատանքներից կամ դա չեն համարում իրենց մասնագիտական պարտականությունը։
    - Պատասխանատվության կիսում. Առաջարկել է թույլ տալ ուսանողներին ընտրել պրակտիկայի վայրը կամ ղեկավարին, որպեսզի նրանք ևս ստանձնեն իրենց ընտրության պատասխանատվությունը։
    - Վերահսկողություն. Հորդորել է խստորեն վերահսկել պրակտիկայի օրագրերի բովանդակությունը, որպեսզի այն լիովին համապատասխանի կրթական ծրագրի նպատակներին։

Նշվեց, որ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել պրակտիկաների կազմակերպմանը և գործնական հմտությունների զարգացմանը, քանի որ գործատուներից ստացվող արձագանքները վկայում են տեսական գիտելիքների գերակշռության և գործնական կարողությունների պակասի մասին։

Հարց է բարձրացրել մանկավարժական ուղղվածությամբ մագիստրոսների պրակտիկայի վերաբերյալ։ Ի պատասխան պարզաբանվել է, որ նրանց պրակտիկաները սովորաբար իրականացվում են նոյեմբեր ամսին, և առաջարկվել է մտածել նաև նրանց շրջանում արտաքին շահակիցների հարցումներ անցկացնելու մասին։

Քննարկման ավարտին Ա. Մակարյանն առաջարկել է հաղորդումն ընդունել ի գիտություն և արձանագրված թվերն ու փաստերը քննարկել ֆակուլտետներում՝ հետագա բարելավումներն ապահովելու նպատակով։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ

- «Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի վերաբերյալ *ԵՊՀ ԻՄ պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի վարիչ Լ. Բեգինյանի* հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի վեցերորդ՝«2026-2027 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը հաստատելու մասին» հարցի մասին լսեցին *ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Հ. Մակարյանի* հաղորդումը։

Ա. Մակարյանն առաջարկվեց սահմանել 11 անվանական կրթաթոշակ: Յուրաքանչյուր կրթաթոշակի չափը թողնվել է անփոփոխ՝ 10,000 դրամ: Զեկուցողը նշեց, որ ֆինանսական վիճակի բարելավման դեպքում հնարավոր է հետագայում չափն ավելացնել:

Բաշխումն ըստ ֆակուլտետների.

- Հումանիտար գիտությունների ֆակուլտետ (4 կրթաթոշակ). Շառլ Ազնավուրի, Գրիգոր Նարեկացու, Դավիթ Անհաղթի և Մխիթար Գոշի անվան:
- Բնական գիտությունների ֆակուլտետ (1 կրթաթոշակ). Համլետ Կարայանի անվան:
- Տնտեսագիտության ֆակուլտետ (2 կրթաթոշակ). Սահակ Ձորափորեցու և Շավարշ Մարգարյանի անվան:
- Կիրառական արվեստի ֆակուլտետ (1 կրթաթոշակ). Սպարտակ Սարգսյանի անվան:
- Համամասնաճյուղային (3 կրթաթոշակ). ԵՊՀ կրթաթոշակ, Արտակ Յուցուլյանի անվան կրթաթոշակ և 44-օրյա պատերազմում զոհված ուսանողների անվան կրթաթոշակ, որը պարբերաբար փոխվում է:

Ա. Մակարյանը շեշտեց, որ այս կրթաթոշակները տրվելու են բացառապես մասնաճյուղի հաշվին, քանի որ պետությունն այլևս ուսանողներին նմանատիպ կրթաթոշակներ չի տրամադրում, նա նաև տեղեկացրեց, որ Նախարարությունը մշակում է կրթաթոշակների տրամադրման նոր, ավելի մեծ չափերով տարբերակ, որը սակայն կապված է բազմաթիվ փաստաթղթերի հավաքագրման հետ և դեռևս մշակման փուլում է:

Արտահայտվեցին՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Ք. Հարությունյանը, Գ. Սիմոնյանը և այլք։

Քննարկվեց «Պատերազմի մասնակիցների անվան կրթաթոշակ»-ում կոնկրետ անուններ ֆիքսելու հարցը: Սակայն Ա. Մակարյանը նշեց, որ անուններով հաստատելը կարող է հետագայում «աղմուկ» առաջացնել, և ավելի նպատակահարմար է պարբերաբար փոխել զոհված ուսանողների անունները։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ 91/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 35-րդ կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում 2026-2027 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը համաձայն հավելված 5-ի։
2 Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

Օրակարգի յոթերորդ՝ «ԵՊՀ ԻՄ ֆինանսական գործունեության մշտադիտարկման արդյունքների ներկայացում և գնահատում։» հարցի մասին լսեցին *ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի* հաղորդումը։

Մ. Մխիթարյաը նշեց, որ 2026թ. առաջին վեց ամիսների ընթացքում մասնաճյուղի փաստացի մուտքերը կազմել են 290 մլն 184 հազար դրամ՝ տարեկան նախատեսված 658.9 մլն դրամի դիմաց։

Եկամտի աղբյուրներ.

- Մուտքերի հիմնական մասը (48.6%) գոյացել է վճարովի ուսուցման ծառայություններից։
- Պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումը (ուսանողական նպաստներ) կազմել է 57.7 մլն դրամ։
- Բանկային ավանդի տոկոսներից ստացվել է 55.9 մլն դրամ, ինչը կազմում է ընդհանուր մուտքերի 19.3%-ը։
- ԵՊՀ-ն արդիականացման ծրագրով մասնաճյուղին հատկացրել է շուրջ 29.5 մլն դրամի օգնություն։

Ծախսային հոդվածներ.

- Ծախսերի ամենամեծ բաժինը՝ 73.3%-ը, կազմել է աշխատավարձի ֆոնդը։
- Էլեկտրաէներգիայի ծախսերը վեց ամսում արդեն իսկ գերազանցել են նախահաշիվը, սակայն ակնկալվում է, որ արևային կայանների շնորհիվ տարեվերջին պատկերը կմեղմացվի։
- Գործուղման ծախսերը նախատեսվածից քիչ են եղել, քանի որ արտասահմանյան ուղևորությունների մեծ մասը ֆինանսավորվել է հրավիրող ծրագրերի (օրինակ՝ Էրազմուս) կողմից։
- Հիմնանորոգման աշխատանքների համար վճարվել է շուրջ 39.6 մլն դրամ։

Մ. Մխիթարյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 6-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք։

Ա. Հ. Մակարյանը պարզաբանեց, որ սա առաջին անգամն է, որ ըստ նոր կարգի՝ վեց ամիսը մեկ գիտական խորհրդին ներկայացվում է ֆինանսական հաշվետվություն։ Նա նաև նշեց, որ 13-րդ աշխատավարձը կախված է լինելու ԵՊՀ-ի ընդհանուր որոշումից։

Նա տեղեկացրեց հյուրանոցի վերանորոգման մասին. նախորդ մրցույթը չի կայացել, և այժմ հայտարարվել է նորը՝ նախագծանախահաշվային աշխատանքների համար։

Ա. Մակարյանը հորդորեց ամբիոններին ներկայացնել մասնագիտական գրականության ցանկ, քանի որ գրադարանային ծախսերի տողով դեռևս գնումներ չեն կատարվել։

Ամփոփելով՝ նշվեց, որ առանց ԵՊՀ օգնության մասնաճյուղի համար բարդ կլիներ, քանի որ ուսման վարձերի հավաքագրումը դժվարությամբ է ընթանում։

Հարց բարձրացվեց ուսանողների կողմից կրեդիտների և ակադեմիական պարտքերի մարման համար կատարվող վճարումների վերաբերյալ։ Պարզաբանվեց, որ դրանք ներառված են «այլ մուտքեր» հոդվածում։ Քննարկվեց վարչական աշխատակազմի համար դեմքի ճանաչման սարքի (face ID) ներդրման հարցը, որը հետաձգվել է բարձր արժեքի և տեխնիկական խնդիրների պատճառով։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ 91/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025թ. դեկտեմբերի 27-ի թիվ 85/1 որոշմամբ հաստատված «ԵՊՀ ԻՄ ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գնահատման կարգի» 9-րդ կետով՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ 2026թ. առաջին վեց ամիսների ֆինանսական գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ գլխավոր հաշվապահ Մ. Մ. Մխիթարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԵՊՀ ԻՄ 2026թ. առաջին կիսամյակի ֆինանսական գործունեության մշտադիտարկման արդյունքները գնահատել բավարար:

3. Ֆինանսական գործունեության մշտադիտարկման արդյունքներով վերհանված առաջարկություններն ու եզրակացությունները (մասնավորապես՝ արևային կայանների կիրառմամբ էլեկտրաէներգիայի ծախսերի մեղմացումը և գրադարանային ֆոնդի համալրումը) ներառել հետագա ֆինանսական պլանավորման և կառավարման բարելավման գործընթացներում։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Մ. Ս. ԱԹՈՅԱՆ